

Հիմնարկի անվանումը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ.

Թափուր պաշտոնի անվանումը՝ գնումների մասնագետ.

Հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը՝ ԱԾԻԳ-ի գնումների մասնագետի աշխատանքների շրջանակը ներառում է՝ վարկային և դրամաշնորհային ծրագրերի գնումների պլանների մշակումը, Միջազգային ֆինանսական կազմակերպությունների (ՄՖԿ) համաձայնությամբ փոփոխումը,՝ ՄՖԿ գնումների ընթացակարգերի համաձայն: Ծրագրերի շրջանակներում շինարարական աշխատանքների, ապրանքների ձեռքբերման մրցույթների, ինչպես նաև խորհրդատուների ընտրության կազմակերպումը, համապատասխան մրցութային փաստաթղթերի/ հրավերների պատրաստումը, ներկայացված հայտերի/առաջարկների գնահատումը, գնահատման զեկույցի պատրաստումը, պայմանագրի բանակցությունների վարումը, պայմանագրերի պատրաստումն ու հետագա կառավարումը, ստորագրված պայմանագրերի շրջանակներում մատակարարված ապրանքների և մատուցված խորհրդատվական ծառայությունների ընդունումը, իրականացված շինարարական աշխատանքների վերահսկումը:

Պահանջվող պարտադիր որակավորումը.

- Բարձրագույն կրթություն ֆինանսական, տնտեսագիտության, կառավարման կամ ճարտարագիտության բնագավառում,
- Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ գնումների բնագավառում,
- ՄՖԿ-ի գնումների (տեղական/միջազգային փորձ) (ներառյալ գնման կազմակերպումը, պայմանագրերի կնքումը և ապրանքների ներմուծումը),
- Հայերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացություն,
- Համակարգչային ծրագրերի (Microsoft Office, Outlook, Internet Explorer) իմացություն, “Mulberry” համակարգով աշխատելու ունակությունը ցանկալի է
- Մարդկանց հետ շփվելու, անհատական և թիմային աշխատանքներ իրականացնելու ունակություններ:

Աշխատանքով հետաքրքրված անձիք կարող են դիմել ՀՀ ԱՆ «ԱԾԻԳ» ՊՀ ՀՀ, ք.
Երևան, Կոմիտաս 49/4 հասցեում գտնվող գրասենյակ մինչև 2022 թվականի
սեպտեմբերի 16-ը ներառյալ:

Հեռ.: 29-75-37, 29-75-38